ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<06 >> <<հուլիս >> 2016 թ N 63
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3.1-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի, << Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6)-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2016 թվականի առաջին կիսամյակի կատարողականների արդյունքները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին /հավելված 1/ պարգևատրել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի <<Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրման>> ֆոնդից :
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2016 թ հուլիսի 6-ի N63 կարգադրության

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների

h/h	Ազգանուն անուն	Պաշտոնը	Կատարողականի արդյունք o/o	Պարգևատրման գումարի չափը
1.	Հովսեփյան Ազատ	Քաղաքաշին. վարչ. պետ	99.76	284900
2.	Գևորգյան Խաչիկ	Առողջապահ. և սոց.ապահ. վարչ. պետ	99.81	275702
3.	Ղազարյան Արփիար	Կրթության, մշակ. և սպորտի վարչ. պետ	99.98	276171
4.	Սիմոնյան Նորայր	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետ պետ	100	242903
5.	Կարապետյան Հայկ	Քարտուղարության պետ	99.66	275217
6.	Ներսիսյան Մարատ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչ. պետ	100	234963
7.	Կարապետյան Վասակ	Ներքին աուդիտի բաժնի պետ	100	242407
8.	Կարապետյան Նորայր	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	100	136908
9.	Ավետիսյան Հասմիկ	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	100	136908
10.	Խաչատրյան Խիկար	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	100	124713

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ